Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆԴԵՍԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Պատմություն և քաղաքականություն» հանդեսում տպագրության ներկայացվող հոդվածները պետք է գրված լինեն Word տեքստային խմբագրի օգնությամբ: Հոդվածները պետք է ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով: Հոդվածի շարվածքը պետք է լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 11, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A4: Հոդվածի սկզբում անհրաժեշտ է գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն և ազգանունը՝ մեծատառերով: Հղումները պետք է դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշելով աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը (էջերը): Հոդվածի բանալի բառերը, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը պարտադիր են, որոնք պետք է պարունակեն առնվազն 150 բառ: Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) տվյալները՝ կոչումը, պաշտոնը, աշխատանքի վայրը, հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցեն (e-mail): Հոդվածներն ուղարկել **generalsepuh@gmail.com** էլեկտրոնային հասցեներով: Հանդեսն ունի իր համացանցային կայքը (**www.generalnews.am**), ուր զետեղված են նրա էլեկտրոնային տարբերակները, հոդվածների վերաբերյալ կարծիքները, տեղեկություններ խմբագրական խորհրդի կազմի և էթիկայի կանոնների մասին: